ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀՆՉԱԿՅԱՆՆԵՐԸ 1880—1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Հնչակյան կուսակցության հիմնադրման 100-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Օսմանյան բռնապետության դեմ XIX դարի երկրորդ կեսին ծավալված հայ ազգային-ազատագրական շարժումը մեր ժողովրդի բազմադարյան պատմության ամենափայլուն էջերից մեկն է։ Հերոսական դրվագներով ու հայրենասիրական խիզախ ընդվզումներով լի այդ շարժմանը 1880—1890-ական թթ. գործուն մասնակցություն ունեցավ, ի թիվս մյուս հայ ազգային կազմակերպությունների ու կուսակցությունների, նաև Հնչակյան կուսակցությունը։

Հնչակյանների կուսակցությունը, ինչպես հայտնի է, ստեղծվեց 1887 թ. Շվեյցարիայի ժնև քաղաքում։ Նրա հիմնադիրներն էին իր ժամանակի առաջավոր գաղափարներով տոգորված, երիտասարդ հայրենասերներ Ավետիս Նազարբեկը, Մարո Վարդանյանը, Ռուբեն Խանազատը, Գաբրիել Կաֆյանը, Գևորգ Ղարաջյանը և ուրիշներ։ Տարբեր տարիներին այդ կուսակցության մեջ ընդգրկվեցին բազմաթիվ հայ անվանի հասարակական-քաղաքական և մշակույթի գործիչներ։

Իր կազմավորման շրջանում Հնչակյան կուսակցությունը գտնվում էր ռուսական հեղափոխական, մասնավորապես, նարոդնիկական շարժման ազդեցության տակ[1]։ Պատահական չէ, որ կուսակցության տպագիր գլխավոր օրգան «Հնչակ» թերթը իր անունը փոխ առավ Ա. Ի. Գերցենի «Կոլոկոլ» հայտնի հանդեսից, իսկ նորաստեղծ կուսակցությունն էլ նույն անունով կոչվեց Հնչակյան կուսակցություն (1909 թ. վերանվանվեց «Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցություն»)։

Հնչակյանները ունեին երկու ծրագիր. մեկը կոչվում էր «Հեռավոր», մյուսը «Մոտակա»։ Առաջինի նպատակն էր Հայաստանում, հեռավոր ապագայում, ստեղծել սոցիալիստական կարգեր։ Հնչակյանների մի զգալի մասը իրեն հայտարարելով մարքսիզմի հետևորդ, աշխատում էր թարգմանությունների միջոցով հայ ընթերցողներին ծանոթացնել մարքսիստական-սոցիալիստական գրականության հետ։ Երկրորդը՝ «Մոտակա» ծրագիրը, իր խնդիրն էր համարում առանց հապաղելու զբաղվել Հայկական հարցով, պայքարել թուրքական բռնակալության դեմ, հանել արևմտահայ ժողովուրդը իր անօրինակ ծանր և ողբերգական վիճակից։ Չնայած նրան, որ տեսական ու գործնական մի շարք հարցերի շուրջը կուսակցության մեջ առկա էին տարաձայնություններ, այնուամենայնիվ բոլոր Հնչակյաններին միաձուլում էր մի գլխավոր խնդիր՝ «Մոտակա»։ ծրագրի համաձայն ազատագրել արևմտահայությունը թուրք սուլթանների լծից, պայքարել ինքնավարության և կամ հնարավորության դեպքում հայկական պետություն ստեղծելու համար։ Դա էր համարվում ժամանակի առաջնակարգ ու անհետաձգելի հարցը։

Կուսակցության առաջին ծրագրում, որը ընդունվեց 1888 թ., ասվում էր, որ մոտակա նպատակին հասնելու «միջոցն է—հեղափոխությունը, այսինքն՝ պետք է բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել ներկա հասարակական կազմակերպությունը Թուրքաց Հայաստանում գործ դնելով ժողովրդային

---

[1] Ա. Գ. Հովհաննիսյան. Հնչակյանների կազմավորման գաղափարական արմատները («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2)։

ապստամբությունը։ Հեղափոխական ապստամբական գործունեության ասպարեզն է Թուրքաց Հայաստանը»[2]։

Ինչպես պարզ երևում է «Հնչակ» թերթի առաջին համարի խմբագրականից, հնչակյաններն իրենց հույսը դնում էին հիմնականում մտավորականության, առանձնապես կրթված, առաջավոր ու հայրենասեր երիտասարդության վրա։ Նրանք կոչ էին անում «ազնիվ հայերին» կապվել ժողովրդի հետ, պայքարել նրա ազատագրության համար։ «Հնչակի» նույն խմբագրականում կարդում ենք. «Յուրաքանչյուր մտածող, ազնիվ ու ժողովրդին սիրող հայի նշանաբանն ու գործունեությունը մենք համարում ենք՝ ժողովրդի մեջ, ժողովրդի հետ և ժողովրդի համար»[3]։

Հետաքրքիր է նկատել, որ հնչակյանները մտածում էին կապեր հաստատել օսմանյան տիրապետության դեմ պայքարող մյուս ժողովուրդների քաղաքական գործիչների ու կազմակերպությունների հետ։ Նրանց ծրագրում նախատեսված էր. «Համերաշխ գործակցություն հաստատել թուրքական լծի տակ հեծող այլ քրիստոնյա ազգերի հեղափոխական մարմինների հետ, որոնց հետ ջանալ, եթե հանգամանքները ներեն, միատեղ ապստամբել ընդհանուր թշնամու, թուրք կառավարության դեմ»[4]։ Անհրաժեշտ էր համարվում նաև վաստակել Արևմտյան Հայաստանում բնակվող վիճակակից մյուս ժողովուրդների համակրությունը։

Այս միտքը քանիցս արտահայտել է նաև կուսակցության գլխավոր օրգան «Հնչակը». «Տաճկահպատակ այլ և օտար ժողովուրդների—հայ, հույն, արաբ, քուրդ, ասորի, եզդի և այլն, որպես և տաճիկ ժողովրդի համերաշխ գործակցություն անհրաժեշտ է հեղափոխության նպատակահարմար հաջողության համար։ Այդ համերաշխ գործակցությունը կարող է կայանալ այդ ժողովուրդների անտեսական ընդհանուր շահերի հիման վրա, և այդ համերաշխ գործակցությունը պետք է ուղղել այդ ժողովուրդների ընդհանուր թշնամու՝ տաճիկ բռնակալության դեմ»[5]։

Իր գոյության առաջին տարիներին հնչակյան կուսակցությունը զբաղվում էր գլխավորապես ազատագրական գաղափարների տարածման գործով։ Այդ նույն շրջանում նրան հաջողվեց կուսակցական բազմաթիվ խմբակներ ստեղծել Թուրքիայում, Կովկասում, արտասահմանյան հայկական գաղթօջախներում, ինչպես նաև կազմակերպել ինքնապաշտպանական կռիվներ Արևմտյան Հայաստանի մի շարք գյուղերում ու քաղաքներում, որոնց հայ բնակչությունը հաճախ ենթարկվում էր թուրքական ոստիկանության ու ավազակային զանազան խմբերի հարձակմանը, կողոպուտներին ու բռնություններին։ 1890 թ. հունիսի 18-ին Էրզրումում (Կաբինում) տեղի ունեցավ գինված ընդհարում հայ երիտասարդության և թուրքական ոստիկանության միջև։ Միջադեպին ղեկավար մասնակցություն ունեցան նաև հնչակյանները։ Ընդհարման ժամանակ, ինչպես հայտնում էր Էրզրումի ռուսական հյուպատոս Դեննետը Կ. Պոլսի իր երկրի դեսպանին, սպանվեցին ավելի քան 14 և վիրավորվեցին մոտ 200 մարդ[6]։

Սուլթանական բռնապետության դեմ ուղղված առաջին խոշոր ընդվզումը, որ կազմակերպեցին հնչակյանները, տեղի ունեցավ 1890 թ. հուլիսի 15-ին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում։ Այդ օրը Թուրքիայի մայրաքաղաքի մի քանի հազար հայեր հնչակյան նշանավոր գործիչներ Հարությունն Ճանկուլյանի ու Համբարձում Պոյաճյանի (Մուրադի) անմիջական ղեկավարությամբ բողոքի ցույց կազմակերպեցին՝ սուլթան Արդուլ Համիդից պահանջելով իրակա-

---

2 «Հնչակ», 1888, № 11—12։

3 Հիսունամյակ Ս. Դ. հնչակյան կուսակցության. Փրովիտենս, 1938, էջ 41։

4 Նույն տեղում, էջ 39։

5 «Հնչակ», 1891, № 9։

6 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. под ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1983, с. 18.

նացնել տարիներ առաջ նախատեսված բարենորոգումները Արևմտյան Հայաստանում և վերջ դնել հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող անօրինակ ճնշումներին ու հարստահարություններին[7]։ Ցույցը սկսվում է հայկական եկեղեցում, ուր Հ. Հանկուլյանը, ընդհատելով պատարագը, բարձրանում է բեմ ու դիմելով հավաքված բազմությանը՝ կոչ անում արևմտահայության օրհասական վիճակի մասին բողոքագիր-պահանջագիր ներկայացնել Թուրքական կառավարությանը։ Նա միաժամանակ կարդում է նախօրոք պատրաստված պահանջագրի տեքստը, ուր Արևմտյան Հայաստանում տիրող ծանր վիճակի մասին ասված էր. «Անտանելի հարստահարություն, անիրավ ձերբակալություններ, ապօրեն դատապարտություն ու անխիղճ աքսորանք անպակաս են։ Սուլթանի արարքներու դեմ ժողովրդի բողոքող արդար ձայնը անլսելի կմնա միշտ, մինչև իսկ կատաղի զորքերով անխնա կկոտորվի, սվինահար ու գնդակահար կիլնա նա, ինչպես Վանա, Մշո, այլ տեղերու և վերջերս Կարնո մեծ դեպքին մեջ։ Մեր հազարավոր վիժող քույրերու աղաղակը և մեր նահատակվող եղբայրներու տակավին տաք արյունը մինչև այժմ անուշադիր մնացած է, արհամարհված ու ծաղրված է իսկա։

Պահանջագրում կային նաև այսպիսի տողեր. «Ժողովուրդ, դու պիտի կորսվիս, դու պիտի վերանաս եթե քո վիճակը նույնությամբ տնվե... Դուն դիտես, որ կյանքդ վտանգի կենթարկես քո ամեն մեկ արդար քայլափոխիդ մեջ։ Բայց ուրիշ տնելիք չմնաց այլևս. հոգիդ հասած բերանդ՝ դու պարտավորված ես դիմելու ամեն ծայրահեղության, որոնց միջոցով միայն քո արդար ձայնը լսեցնել տալ աշխարհին, և քո արդար պահանջների նպատակին հասնել։ Ահա այս է մեր այսօրվան ցույցի խորհուրդը»[8]։

Բ. Դոանը պահանջագիր ներկայացնելու առաջարկը ոգևորում է բոլորին, և նրանք շարժվում են դեպի սուլթանի պալատը, իրենց հետ բռնի կերպով տանելով պատրիարք Խորեն Աշըգյանին, որը, լինելով խիստ պահպանողական, դեմ էր նման քայլերին։ Սակայն մինչև Ելդիզի պալատ հասնելը բազմամարդ երթի դեմ է ուղարկվում Թուրքական հետևակ և հեծյալ զորքը Դերվիշ փաշայի հրամանատարությամբ։ Տեղի է ունենում զինված ընդհարում, երկու կողմերն էլ տալիս են սպանվածներ ու վիրավորներ։ Ի վերջո ցուցարարները տեղի են տալիս, կատարվում են բանտարկություններ։

Գում Գափուի այս ցույցը մեծ արձագանք գտավ հայ ժողովրդի լայն խավերում։ Օսմանյան պետության մայրաքաղաքում կատարված այդ խիզախ հայրենասիրական ակտը միաժամանակ մեծ տպավորություն թողեց ոչ միայն Թուրքիայում, այլև եվրոպական շատ երկրներում։

Կազմակերպելով Գում Գափուի ժողովրդական ցույցը, հնչակյանները նպատակ ունեին հրավիրել մեծ պետությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա և նրանց միջոցով ստիպել Թուրքական կառավարությանը լուծել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու խնդիրը։ Բայց այդ հույսերը չարդարացան։ Փոքր ժողովուրդների իրավունքների մասին շատ հաճախ խոսող տերությունները մնացին անտարբեր, և սուլթան Աբդուլ Համիդը շարունակեց իր արյունոտ քաղաքականությունը։

Կ. Պոլսում կատարված դեպքերից հետո հնչակյան կուսակցության քաղաքական գործունեության գլխավոր կենտրոնը դարձավ Արևմտյան Հայաստանի Սասուն գավառը։ Հայ գյուղացիությունը հատկապես այստեղ ենթարկվում էր անօրինակ սոցիալական հարստահարությունների և ազգային վայրենի ճնշումների։ Գավառի բնակչությունը գտնվում էր գրեթե ճորտական վիճակում։ Նա ծանր հարկեր էր վճարում ոչ միայն պետությանը, այլև քուրդ ավա-

---

[7] Մի շարք աշխատություններում ցուցարարների թիվը հաշվվում է 5000 (տե՛ս, օրինակ, Հուշարձան նվիրված Ս. Դ. Հնչակյան կուսակցության քառասունամյակին. Փարիզ, 1930, էջ 282)։

[8] Տե՛ս Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության. 1887—1962. Հ. Ա, Պեյրութ. 1962, էջ 55—57։

տատերերին, ընդ որում վերջիններիս համար կատարում էր նաև կոռ ու բեգյար։ Այս բոլորին պետք է ավելացնել նաև այն, որ սուլթան Աբդուլ Համիդը արդեն գործնական քայլեր էր անում հայկական մասսայական ջարդեր կազմակերպելու ուղղությամբ։

1894 թ. սասունցիները զենքի դիմեցին՝ իրենց ղեկավար ունենալով Հնչակյան նշանավոր գործիչ Մուրադին (Հ. Պոյաճյանին) և նրա մի շարք գործակիցներին՝ Գևորգ Չավուշին (Գևորգ Ադամյանին), Գրգոյին (Գրիգոր Մոսեսյանին) և այլոց։ Սուլթան Աբդուլ Համիդի հրամանով ապստամբների դեմ շարժվեցին թուրքական 4-րդ բանակի զորամասերը և նորաստեղծ Համիդիե գնդերից մի քանի վաշտեր Զեքի փաշայի հրամանատարությամբ։ Կանոնավոր այդ զորքերին միացան բազմաթիվ հրոսակախմբեր, որոնց գլխավորում էին թուրքական իշխանությունների թելադրանքով գործող զանազան քուրդ շեյխեր։

Տեղի ունեցան կատաղի ճակատամարտեր։ Ապստամբները անօրինակ հերոսությամբ բազմիցս հետ շպրտեցին թշնամու գրոհները։ Նրանք կռվում էին իրենց հատուկ խիզախությամբ և անձնազոհությամբ։ Զենք էին վերցրել նաև կանայք, երիտասարդ աղջիկներն ու ծերունիները։ Սասունցիների արիությունը դեռ իր ժամանակ նշել է Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Մաքսիմովը։ Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովին ուղղված իր զեկուցագրում նա 1894 թ. հոկտեմբերի 1-ին գրում էր, որ բոլորը, անդամ կանայք ցուցաբերել են անձնուրաց խիզախություն[9]։

Արյունոտ մարտեր ծավալվեցին մասնավորապես Շենիք, Սեմալ, Տալվորիկ գյուղերում ու Անդոկ լեռան լանջերին։ Բայց ուժերն անհավասար էին։ Թշնամին հզոր էր, մեծաքանակ ու լավ զինված։ Կոտրելով ապստամբների դիմադրությունը, նա գրավեց Սասունը։ Կողոպտվեցին ու ավերվեցին մի քանի տասնյակ գյուղեր, չտեսնված բարբարոսությամբ սրի քաշվեց ավելի քան 10 000 մարդ։

Սասունի հայ բնակչության մասսայական սոսկալի ջարդերի դեմ իր ձայնը բարձրացրեց միջազգային հասարակական կարծիքը, որի ազդեցության տակ անգլիական, ֆրանսիական ու ռուսական կառավարությունները Արևմտյան Հայաստանի համար 1895 թ. կազմեցին բարենորոգումների մի նոր ծրագիր և մայիս ամսին այն ներկայացրին թուրքական կառավարությանը՝ ի կատար ածելու նպատակով։ Դաժան ու նենգամիտ սուլթանը, սակայն, որ լավ գիտեր մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունը Հայկական հարցում, անուշադրության մատնեց այդ պահանջը և սկսեց գաղտագողի նախապատրաստել արևմտահայության նոր մասսայական կոտորածներ[10]։

Հնչակյանների հակասուլթանական նոր ելույթը տեղի ունեցավ դարձյալ Կ. Պոլսում, 1895 թ. սեպտեմբերի 18-ին։ Այդ մի հզոր ցույց էր, որ նպատակ ուներ նոր բողոքագիր ներկայացնել Արևմտյան Հայաստանում տիրող ծանր վիճակի մասին և պահանջել թուրքական կառավարությունից իրագործել մայիսյան ռեֆորմների ծրագիրը։ Ցուցարարների՝ թուրքական կառավարությանը ներկայացվելիք բողոք-պահանջագիրը սկսվում էր հետևյալ տողերով. «Կ. Պոլսո տեղացի և ասիական ամեն նահանգե պանդուխտ հայերս միաձայն հավանությամբ կազմակերպեցինք այս ցույցը, հանդիսավոր կերպով բողոքելու համար մեր երկրին մեջ տիրող արդի կացության դեմ և Բարձրագույն Դռան ու Եվրոպայի ներկայացնելու համար հայ ժողովրդին պահանջները։

Մենք կուզենք այսօր անգամ մը ևս մեր կացության վրա հրավիրելով քաղաքակիրթ աշխարհին ուշադրությունը, հայտարարել, թե անխախտելի որոշում տված ենք այլևս համակերպությամբ չտանիլ արդի մահաբեր և անիրավ վիճակը»։

---

9 Геноцид армян в Османской империи..., с. 26.

10 Հայ ժողովրդի պատմություն. Երևան, 1985, էջ 281—282։

Այնուհետև շարադրելով իրենց բողոքը, ցուցարարները մասնավորապես դրում էին. «Մենք կբողոքենք այն սիստեմատիկ հալածանքին դեմ, որուն ենթակա եղած է մեր ժողովուրդը մանավանդ այս վերջին քանի մը տարիներս, որ Բարձրագույն Դռան կողմե ընդունված է իբրև կառավարական սկզբունք, միակ նպատակ ունենալով բնաջինջ անել հայերը իրենց բնիկ երկրենն։ Պահանջների մեջ կար նաև այսպիսի մի կետ. «Մենք կպահանջենք օրինական իրավունք, որոնք բացարձակորեն երաշխավորեն մեր կյանքին և ինչքին բացարձակ ապահովություն, մեր պատվույն պահպանություն և հարգանք»[11]։

Ինորոշ է այն հանգամանքը, որ բողոք-պահանջագրում խոսվում էր նաև բախտակից Հարևան ժողովուրդների մասին։ «Հաստատ համոզված ենք, որ վերոհիշյալ պահանջներուն իրականացումը անհրաժեշտ է թե հայերուն ընդհանուր ապահովությանն ու բարեկեցությանը համար և թե այն տարբեր ժողովուրդներուն համար, որոնք մեր երկիրը կբնակին և որոնց հետ մեր շահերը միևնույնն են»։

Այս նոր ցույցը, որին մասնակցում էին մի քանի հազար հայ աշխատավորներ, ուներ խաղաղ բնույթ։ Կ. Պոլսի Հնչակյան կազմակերպության ղեկավարները դեռևս սեպտեմբերի 16-ին հայտնել և նախազգուշացրել էին սուլթանական պետության համապատասխան ներկայացուցիչներին և եվրոպական պետությունների դեսպաններին այն մասին, որ սեպտեմբերի 18-ին իրենք խաղաղ ցույց են կազմակերպելու Կ. Պոլսում։ Բայց սուլթան Աբդուլ Համիդը, որ ինչքան դաժան, այնքան էլ վախկոտ էր, չհանդուրժեց նման «խռովությունը»։ Երբ հայ ցուցարարները շարժվեցին դեպի սուլթանի Բարը Ալի պալատը, տպա թուրք ոստիկանները և զինվորները կրակ բացեցին նրանց վրա։ Հրահրվեց զինված ընդհարում, որի հետևանքով եղան սպանվածներ ու վիրավորներ։ Բ. Դռան կողմից նախորոք կազմված ծրագրի համաձայն սկսվեցին հայ բնակչության նոր կոտորածներ Կ. Պոլսում։

Թուրքական բռնակալության բարբարոսությունները բողոքի ու զայրույթի հզոր ալիք բարձրացրին հայ ժողովրդի մեջ և շատ երկրներում։ Վախենալով ազատագրական շարժման նոր ընդվզումներից և այն բանից, որ մեծ պետությունները կարող են օգտագործել հայկական բարենորոգումների հարցը իրենց շահադիտական նպատակների համար, սուլթան Աբդուլ Համիդը ստորագրեց օրենք մայիսյան ռեֆորմները իրականացնելու մասին։ Բայց ինչպես ցույց տվեցին հետագա անցքերը, օսմանյան միապետը այդ արեց միայն առերես, միայն խաբելու համար։

Կ. Պոլսում 1895 թ. սեպտեմբերի 18-ին տեղի ունեցած դեպքերից շատ չանցած, Հնչակյան կուսակցությունը գլխավորեց զեյթունցիների 1895—1896 թթ. համաժողովրդական հզոր ապստամբությունը ուղղված թուրքական բռնապետության դեմ։ Բանն այն է, որ չնայած սուլթան Աբդուլ Համիդի կեղծ խոստումներին, Բ. Դուռը գաղտնի որոշում ընդունեց հայերի մասսայական ջարդեր կազմակերպել նաև Զեյթունում։ Մարաշից և այլ շրջաններից թուրքական մեծաքանակ զորքեր և հազարավոր բաշիբոզուկներ շարժվեցին դեպի հայ ազատագրական շարժման այդ նշանավոր կենտրոնը։ Ծրագրված ոճրագործությունը կանխելու նպատակով զեյթունցիները ապստամբության դրոշ բարձրացրին թուրքական կառավարության դեմ և որոշեցին այս անգամ ևս փրկել իրենց կյանքն ու պատիվը զենքի օգնությամբ։ Ջարդերից խուսափելու և ընդհանուր ուժերով թշնամու դեմ մաքառելու նպատակով գավառի բազմաթիվ հայ գյուղերի բնակիչները փոխադրվեցին նրա կենտրոն Զեյթուն քաղաքը։

11 Հիշատակարան Ս. Դ. Հնչակյան կուսակցության, էջ 132—133։

Մի քանի ամիս շարունակ, 1895 թ. հոկտեմբերից մինչև 1895 թ. փետրվար ամիսը, հայ ազատասեր լեռնականները հերոսական ինքնաուշապանական կռիվներ մղեցին հզոր թշնամու դեմ։ Տեղի ունեցան կատաղի ճակատամարտեր։ Դեռևս հոկտեմբերի 18-ին ապստամբները գրավեցին թուրքական զորանոցը[12], որը գտնվում էր Զեյթուն քաղաքի մոտակայքի մի բարձունքի վրա։ Գերի հանձնվեց մոտ 600 թուրք զինվոր ու սպա։ Զեյթունցիների ձեռքն անցան հարուստ ռազմամթերք և պարեն[13]։ Թշնամին հետագայում ևս ստացավ ծանր հարվածներ ու տվեց հազարավոր զոհեր, չնայած ուներ շատ մեծ գերակշռություն։ Զեյթունի վրա հարձակվող թուրքական զորքերի թիվը կազմում էր մի քանի տասնյակ հազար, որի մի մասը բաշիբոզուկներ էին, իսկ հայ ապստամբ մարտիկների թիվը վեց հազարից ավել չէր։ Բայց չնայած դրան, թուրքերին չհաջողվեց կոտրել զեյթունցի մարտիկների դիմադրությունը։

Զեյթունցիների այդ հերոսական պայքարը անմիջականորեն ղեկավարում էին հնչակյաններ Աղասին (Կարապետ Թուրսարգսյան), Հրաչյան (Գրիգոր Ղարիբյան), Ապահը (Պետրոս Գմգմյան) և ուրիշներ։ Թուրքական զորքերի դեմ մղված կռիվներում խոշոր դեր է կատարել նաև Նազարեթ Չավուշը։

Ապստամբ հայ գյուղացիները ցուցաբերեցին անօրինակ սխրագործություններ։ Նրանց խիզախությունն ու անձնազոհ հայրենասիրությունը մեծ հարգանք ու ոգևորություն առաջացրին ոչ միայն հայերի, այլև օտարերկրյա շատ քաղաքացիների մեջ։ Պատահական չէ, օրինակ, որ իտալացի դիվանագետ, հյուպատոս Հենրիկոս Վիտտոն, որ 1896 թ. հունվարին ժամանեց Զեյթուն և ականատես եղավ այնտեղ կատարվող դեպքերին, հայ լեռնականների ապստամբությունը նմանեցնում էր Գարիբալդու ղեկավարությամբ տեղի ունեցած ազգային-ազատագրական շարժմանը։ Իր հուշերը պարունակող գրքում նա ջերմ տողեր է նվիրել քաջարի զեյթունցիներին. «Ողջունում եմ քեզ հերոսական Զեյթուն։ Քանի դեռ արևը կփայլի մարդկային դժբախտությունների վրա, քո անունը կապրի որպես հարստահարվող ժողովուրդների հույսի խորհրդանիշ»։ Իտալացի հումանիստը բազմիցս նշել է հայ լեռնականների խիզախությունը և նրանց պայքարի արդարացիությունը։

Անձամբ ծանոթ լինելով ապստամբների մի շարք ղեկավարների հետ, Վիտտոն տվել է նրանց բնութագիրը։ «Աղասին,—գրում է նա,—հմուտ կազմակերպիչ է, սակայն չունի զինվորականի հատկանիշներ։ Խիզախությունն ու հայրենասիրությունն անպակաս են, բայց բնությունը իրեն չի օժտել մարտեր վարելու ունակությամբ։ Շիկահեր է, գունատ, նիհար, ֆիզիկական կառուցվածքը թողնում է հիվանդ մարդու տպավորություն»... «Հրաչյան խիզախ է և համարձակ, ունի խիստ հայացք, միշտ պատրաստ է մարտի նետվելու։ Գնում է կռվելու այնպես, կարծես պարահանդես գնա։ Քիչ է խոսում, կարծիքներ ու մտքեր փոխանակելու փոխարեն գերադասում է գնդակների սուլոցն և արյունալի մարտերը»[14]։

Վիտտոյի գրառումներում կարդում ենք. «Զեյթունում ծածանվում էին երկու դրոշակ. մեկը կարմիր՝ ապստամբության դրոշը, որ տեղադրված էր կառավարական տան (այսինքն կայմակամի նստավայրի.—Մ. Ն.) վրա, մյուսը՝ սպիտակ, վարդագույն ու կանաչ, որը ծածանվում էր քաղաքի մոտ գտնվող վանքի տանիքին։ Այս եռագույն դրոշը հայկական ազգային դրոշն է, որի վրա

12 Հ. Մ. Պողոսյան. Զեյթունի պատմությունը. Երևան, 1969, էջ 339։

13 Հայ ապստամբներին հանձնվեցին 2 թնդանոթ, 170 ռումբ, 600 Մարտինի հրացան, 120 000 փամփուշտ, 2 տակառ վառոդ, 2 ամբար գարի, 2 ամբար բրինձ, 40 տոննա ալյուր, 30 տակառ ձեթ, 1500 զույգ գուլպա և այլն (տե՛ս Գր. Գալստյան. Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն. Նյու Յորք, 1934, էջ 159։ Տ. Գևորգյան. Սանասոխ, պատմություն Զեյթունի 1895-ի պատերազմներուն... Բ մաս, Փարիզ, 1946, էջ 26։

14 Anatolio Latino. Gli Armeni e Zeitun. Vol. 2, Firenze, 1899, p. 171. Հ. Վիտտոն իր հուշերը հրապարակել է կեղծանունով։ Ի դեպ, այս գրքում կան հետաքրքիր ու մանրամասն տեղեկություններ Մարաշի 1896 թ. հայկական կոտորածների մասին։

գրված է. «Աղատ ապրել կամ մեռնել, կեցցե՛ հայ ժողովուրդը»։ Կարմիր գրոշի վրա, որ հեղափոխության դրոշն է, գրված է. «Կեցցե՛ հեղափոխությունը, կեցցե՛ հնչակյան կուսակցությունը»[15]։

Զեյթունցիների այս ապստամբությունը, որը XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման ամենափայլուն դրվագն է, ի չիք դարձրեց հայ լեռնականներին բնաջինջ անելու թուրքական կառավարության արյունոտ ծրագիրը։ Ի վիճակի չլինելով ծնկի բերել քաջարի ապստամբներին, սուլթան Աբդուլ Համիդը ստիպված եղավ ընդունել եվրոպական վեց պետությունների միջամտությունը և կնքել համաձայնագիր իր բռնապետության դեմ ապստամբած հայ գյուղացիների հետ։ Թուրքական զորքերը հետ քաշվեցին Զեյթունից, հայտարարվեց ընդհանուր ներում, ապստամբությունը գլխավորող հնչակյան գործիչներին թույլատրվեց հեռանալ Թուրքիայից, խոստացվեց մի քանի տարով հայ գյուղացիներին ազատել հարկեր վճարելուց և այլն։ Զեյթունցիները պարտավորվեցին վերադարձնել պատերազմական գործողությունների ժամանակ թուրքական բանակից գրավված թնդանոթները և մյուս ռազմամթերքը։

Զեյթունցիների 1895—1896 թթ. հերոսական ապստամբությունը փաստորեն վերջացավ հաղթանակով։ Այն մեծ ոգևորություն առաջ բերեց հայ ժողովրդի ամենալայն խավերում և ջերմ արձագանք գտավ շատ երկրների առաջավոր հասարակության մեջ։ Դեպքերը, սակայն, այլ ընթացք ստացան Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում։ Թուրքական իշխանություններին, օրինակ, հաջողվեց նույն 1896 թ. ամռան ու աշնան ամիսներին ջարդեր կազմակերպել Վասպուրականում և մասնավորապես Վան քաղաքում։ Վանեցիները դիմեցին ինքնապաշտպանական կռիվների, որոնց մասնակցեցին տեղի բոլոր հայրենասերների հետ միասին նաև հնչակյանները։ Տեղի ունեցան հերոսական մարտեր, որոնցում աչքի ընկան հատկապես Մկրտիչ Ավետիսյանը, Մարտիրոս Սարուխանյանը (Մարտիկ), Ալեքսանդր Պետրոսյանը (Պետո), Տիգրան Տերոյանը (Վազգեն) և ուրիշներ։ Բայց ուժերը անհավասար էին. Վանի հայ բնակչությունը տվեց բազմաթիվ զոհեր։

Վանի հայ հայրենասերներին օգնելու, ինքնապաշտպանական նոր կռիվներին մասնակցելու նպատակով նշանավոր հնչակյան Փարամազը (Մաթեվոս Սարգսյան), գլխավորելով մի խումբ կամավորների, 1897 թ. Պարսկաստանից անցավ Վան։ Բայց այստեղ թուրք ոստիկանության հետ տեղի ունեցած մի դինված ընդհարումից հետո բանտարկվեց ու դատի տրվեց։ Վանի թուրքական քրեական դատարանի եզրափակիչ նիստում, որ տեղի ունեցավ 1898 թ. օգոստոսի 1-ին, Փարամազը արտասանեց իր հայտնի «Վերջին խոսքը», ուր ամենայն խիզախությամբ ցույց տրվեց օսմանյան պետության բարբարոսական քաղաքականությունը հայ և հարևան ժողովուրդների նկատմամբ։ Անվեհեր «դատապարտյալը», որին մեղադրում էին «խռովարարության» և նման կարգի այլ «հանցանքների» մեջ[16], հրապարակեց նաև անհերքելի տվյալներ Վանում ու Վասպուրականում կատարված ոճիրների մասին։ «Վանի մեջ, հայտարարեց Փարամազը, մի բարձրաստիճան պաշտոնյա՝ Դալլաբ փաշա, հարուստ հայերին իր տունը հրավիրեց պաշտպանելու պատրվակով, բայց կողոպտելուց հետո իր ձեռքով ամենքին ալ՝ մոտ 200 հոգի, անասելի չարչարանքով սպանեց։ Արճակում 450 հոգու եկեղեցու մեջ զինվորները ոչխարի պես մորթեցին։ Ալշավաղում տեղական մյուտիրը 40 հոգու ցորնահորի մեջ կենդանի թաղեց՝ օրինակ վերցնելով Զեքի փաշայից, որը 600 հոգի թաղել էր հորի մեջ։ Մոքսի կառավարիչը տեղական հայերին խոստովանեց՝ «Չեմ կարող, ասում է, ձեզ պաշտպանել, քանի որ տերության հրամանն է»։ Շարաֆ բեյ, ավազակ Շա-

15 Նույն տեղում։

16 Ճիշտ է ասված, թե Փարամազի գլխավոր «մեղքն» այն էր, որ նա առաջ էր քաշում «Ինքնավար Հայաստան՝ անջատ Թուրքիայից» գաղափարը (տե՛ս Հարդանք Ս. Դ. հնչակյան քսան անմահներուն. Գեյրութ, 1957, էջ 8)։

քիր, Ջաֆար բեյ և այլն տերության շնորհիվ շքանշանների արժանացան, որովհետև շատ կոտորեցին ու կողոպտեցին»։

Իր վերջին խոսքը Փարամազը ամփոփեց այսպես. «Տաճիկ կառավարության անպատմելի բռնությունը ստիպեց մեզ հեղափոխական լինել... հեղափոխականի վսեմ արհամարհանքով լսում եմ ընդհանուր դատարանի անատամ ամբաստանությունները և ձեր վճիռները... վճռեցեք, որքան կարողանաք, արհամարհում ենք, վճռեցեք, բայց վախեցեք ապագայից»[17]։

Թուրքական չարդարարների դեմ ուղղված Փարամազի այս փայլուն ճառը ջերմ արձագանք գտավ շատ երկրների առաջավոր հասարակության մեջ և հայրենասիրական շարժման նոր ալիք բարձրացրեց հայ հայրենասերների շարքերում։ Դատավճիռը՝ կախաղան բարձրացնել Փարամազին, ի կատար ածվեց, քանի որ «մեղադրյալը», լինելով ռուսահպատակ, ռուս հյուպատոսի պահանջով հանձնվեց ցարական կառավարությանը[18]։

Հարկ է նշել, որ 1889—1890-ական թթ. թուրքական բռնապետության դեմ ուղղված մարտերում հնչակյան կուսակցությունը տվեց շատ զոհեր։ Հիշենք, օրինակ, որ թուրք դահիճները կախաղան բարձրացրին նշանավոր հնչակյաններ Թորոս Ծառուկյանին (1893 թ. հուլիսին) և Մարտիրոս Բոյաճյանին (Ժիրայրին, 1894 թ. մարտին)։ Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում կախաղան հանվեցին նաև այլ հերոսներ։ Հարյուրավոր մարդիկ գնդակահարվեցին, բանտարկվեցին ու աքսորվեցին։ Մարտի դաշտում հերոսաբար ընկան ազատագրական շարժման անվանի գործիչներ Բարսեղ Ջաքարյանը (Լևոն), Դանիել Ջավուշը և շատ ուրիշներ։

Հնչակյանների պայքարը թուրքական բռնապետության դեմ շարունակվեց նաև XX դարի առաջին երկու տասնամյակներին։ Համառոտակիորեն հիշենք այդ շրջանի պայքարի պատմության մի քանի էջերը։

1915 թ., հայ ցեղասպանության շրջանում, Արևմտյան Հայաստանում ծավալված ազատագրական-ինքնապաշտպանական կռիվներին լայնորեն մասնակցեցին նաև հնչակյանները, որի համար երիտթուրքերի ոճրագործ կառավարությունը դաժան դատաստան տեսավ նրանց հետ։ 1915 թ. հունիսի 15-ին, Կ. Պոլսում, սուլթան Բայազիդի անունը կրող հրապարակում թուրք դահիճները կախաղան բարձրացրին 20 ականավոր հնչակյանների, որոնց թվում Փարամազին, Պետրոս Թորոսյանին (դոկտ. Պեննեյին), Արամ Աչըգպաշյանին, Գեղամ Վանիկյանին, Երվանդ Թոփուզյանին, Վահան Պոյաճյանին և մյուսներին։ Նույն թվականի հուլիսի 31-ին արյունռուշտ Թալեաթ փաշայի հրամանով կախաղան բարձրացրին նաև հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ ու անվեհեր մարտիկ Մուրադին։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսական բանակի կազմում թուրքական բռնապետության դեմ կռվող հայկական կամավորական մյուս գնդերի հետ միասին խիզախորեն կռվում էր նաև հնչակյանների կողմից կազմակերպված վեցերորդ կամավորական գունդը՝ Գրիգոր Ավշարյանի հրամանատարությամբ։ Ի դեպ, այս գնդի կազմում թուրք բարբարոսների դեմ մարտնչում էր նաև անվանի հայրենասեր, հնչակյան, հետագայում Սովետական Ռուսաստանում 1918—1921 թթ. ծավալված քաղաքացիական կռիվների լեգենդար հերոս, կարմիր բանակի ականավոր հրամանատարներից մեկը՝ Հայկ Բժշկյանը (Գայը)։

Հնչակյանները մասնակցեցին թուրքական զավթիչների դեմ ուղղված ժողովրդական ինքնապաշտպանական այն կռիվներին, որոնք բռնկվեցին 1918 թ. մայիսին Սարդարապատում, Ղարաքիլիսայում ու Բաշապարանում։ Հայ ժո-

---

17 Հիշատակարան Ս. Դ. Հնչակյան կուսակցության..., էջ 159։

18 Մոտ երկու տարի ցարական բանտերում մնալուց հետո Փարամազը ազատ արձակվեց։ Նրա ընկերներին Վանի թուրքական դատարանը դատապարտեց մի մասին 50, մյուս մասին՝ 22 տարվա բանտարկության (տե՛ս Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, էջ 200)։

ղովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող այդ հերոսական կռիվների ընթացքում աչքի ընկան, ի թիվս շատ շատերի, նաև ոչ քիչ հնչակյաններ։

Հայտնի է, որ Թուրքիայում իշխանության գլուխ անցած քեմալական նացիոնալիստները, օգտվելով ֆրանսիական կառավարության թյուրքոֆիլ ու խարդախ քաղաքականությունից, 1920—1921 թթ. կազմակերպեցին հայության մասսայական ջարդեր Կիլիկիայում։ Բազմաթիվ վայրերում, սասնավորապես Հաջինում և Զեյթունում, տեղի ունեցան հայ գյուղացիների հերոսական, ինքնապաշտպանական կռիվներ, որոնք, սակայն, վերջացան անհաջողությամբ։ Կիլիկիահայերի ջարդերը կանխելու ու խափանելու, թուրք բարբարոսների գեմ դինված պայքարի ելած հայերին օգնելու նպատակով զգալի գործ կատարեց, հայկական մյուս հասարակական-քաղաքական կազմակերպությունների և կուսակցությունների հետ միասին, նաև հնչակյան կուսակցությունը։

Քսաներորդ դարում թուրքական հարստահարողների ու ջարդարարների գեմ հնչակյանների ծավալած ազատագրական պայքարը ևս հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման կարևոր դրվագներից մեկն է։ Այդ հարցին, սակայն, կանդրադառնանք մի այլ հոդվածով։

АРМЯНСКОЕ ОСВОБОДИТЕЛЬНОЕ ДВИЖЕНИЕ И ГНЧАКИСТЫ В 1880—1890-х ГОДАХ

(К 100-летию со дня основания партии гнчакистов)

Академик АН АрмССР М. Г. НЕРСИСЯН

Резюме

Партия гнчакистов приняла активное участие в армянском национально-освободительном движении 1880—1890 гг., направленном против невыносимого османского ига. В статье в частности показано, что гнчакисты играли значительную роль в организации народно-освободительных восстаний в Сасуне (1894 г.) и в Зейтуне (1895—1896 гг.). Они организовали также массовые политические демонстрации армянского населения города Константинополя (в 1890 и 1895 гг.), требуя от кровавого султана Абдул Гамида осуществить реформы в Западной Армении, предусмотренные Берлинским конгрессом в 1878 г. Гнчакисты участвовали и во многих самооборонительных боях армянских крестьян и горожан, имевших место в разных провинциях и в отдельных городах и деревнях страны. Многие выдающиеся деятели этой партии пали жертвой в борьбе с турецкими угнетателями: были повешены, варварски убиты и уничтожены турецкими палачами.